



Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ

(Շար. Բ. Էջէն)

Հաշուելու նաֆթը եւ 400,000 հայերը որոնք հաւանարար լինելու  
Ատրպէյճանը եւ հաստատուին Հայաստան՝ եթէ այս վերջինը  
ստանայ արդարացիօրէն իրեն բաժին ինկած հողամասերը:

Հիմք ունենալով այս բնակչային տուեալները, որոնք  
միակ էն մեր տրամադրութեան տակ եւ քաղուած հայկական  
համայնադիտարանէն, տեսնենք թէ ինչ պէտք էր ըլլար իւրա-  
քանչիւր հանրապետութեան բաժին ինկող եւ արդարացի տա-  
րածքը:

Համեմատականութեան օրէնքի վրայ հիմնուելով Հայաս-  
տանը պէտք էր ունենար.

$$3,031,000 \text{ բնակիչ} = 41,645 \text{ ք. քմ}$$

72,8 խտութիւն

Հայերուն ինկած հողային տարածքը պէտք էր ըլլար  
41,635 ք. քմ. որուն կը մօտենանք եթէ նախիջեւանը (5,500 ք.  
քմ.) եւ Լեռնային Ղարաբաղը (4,400 ք. քմ.) միացուէին Հա-  
յաստանին, որը կ'ունենար 39700 ք. քմ. տարածութիւն՝ որը  
տակաւին նուազ է քան իրեն ինկած օրինական բաժինը: Ախալ-  
քալաքը (մօտ 3000 ք. քմ.) կրնար ամբողջացնել եւ հաւասարա-  
կշռել գրութիւնը:

Գիտենք թէ այս պատճառարանութիւններուն ինչով կա-  
րելի է առարկել: Անոնց պատասխանը կը ձգենք ուրիշ առիթի  
մը կամ աւելի ճիշդ կը ձգենք մեր հայրենի դիտնականներուն եւ  
պատմարաններուն: